որք ինձ նման՝ փորձանքի էին պատահել, և բոլորը կառապանների անհոգութիւնից յառաջ եկած։

Այս պատմութիւնը գրեցի նորա համար, որ կարդացողները յիշեն և ողորմի տան Նազանի բաջուն ըստ Աւետարանին՝ «Խօսեցի վասն յիշատակի դորա», ինչպէս Քրիստոս ասաց Մարիամ Մագդաղենացու համար. վասն զի՝ Նազանի բաջին իմաստուն կուսանաց նման աշխատում էր հոգւոյ լապտերի իւղը առատացնել, Աստուծոյ վարձատրութեանն առաւել ակնկալեալ՝ քան մարդկանց. արդարև Ղազարոսի քոյր Մարիամի նման՝ Նազանի բաջին «Մասն բարի ընտրեաց»։

Երանի՜ թէ՝ ամեն քրիստոնեայ մարդ իւր ունեցած բարութեան, գիտութեան մասնակից անի կարօտելոց քանքարաշահ ծառայի նման. և այս իսկ է Քրիստոնէի պարտքն ու պատիւը։

Հաբա որքան վարձք ու փառք ունի այն քրիստոնեայն, որ բժշկում է բարոյապէս հիւանդի հոգեւոր վէրքերը բանիւ սուրբ Աւետարանի, հեռացնելով տգէտին մոլորութեան ճանապարհից, և առաջնորդելով դէպի ճշմարտութիւն։

Ցիրաւի մեծ գործ է այս, բայց և մեծ վարձք ունի ստանալու, ինչպէս Քրիստոս ասաց «Որ արասցէ և ուսուցէ՝ մեծ կոչեսցի յարքայութեան երկնից»։

Զամախին և Բագուն ամեն դէպքում խաղաղութեան և խռովութեան՝ իբրեւ մի աշխարհ կազմող քաղաքներ—Ջիրուանի աշխարհն, և մի իշխանութեան ենթարկեալ— Ջիրուան Զահի իշխանութեան՝ համարեա մի պատմութիւն են կազմում. ուստի և Զամախու պատմութիւնը պէտք է որոնել Բագուայ պատմութեան մէջ, և Բագուայ պատմութիւնը Զամախու պատմութեան մէջ, ըստ որում Բագուն եղել է Ջիրուանի Զահերի ձմերանոցը, իսկ Զամախին ամարանոցը, ինչպէս Աղուանից Վաչական թագաւորի Վարսենիկ աղջկայ պատմութիւնից հան երևում է. կարդա Զամախւոյ Ղըզլալայի նկարագրութիւնը՝ գրքիս յերես 297։